Ուսումնական հաստատության դասղեկի աշխատանքային պլան 2023-2024 ուստարի

Դասղեկի թեմատիկ պլանավորում
Դպրոց—Չոլաքարի N1միջն.դպրոց
Դասարան—9-րդ
Դասղեկ՝Ս.Յարոյան

Կրթադաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները
1.Ներածություն(դասարանի ընդհանուր բնութագիրը)Դասարանի կազմը՝26 ԱՇԱԿԵՐՏ՝10 աղջիկ,16 տղա:Դասարանը համախմբված է ,տիրում է ջերմ մթնոլորտ,չնայած կան նաև աշխույժ աշակերտներ,որոնց հետ պետք է լուրջ աշխատանք տարվի,բայց ընդհանուր առմամբ աշակերտները ընկերասեր են,աչքի են ընկնում միմյանց հարգելու և օգնելու բարձր գիտակցությամբ:
2.Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում:
..Ուշադրության կենտրոնում պահել և մշտապաես հետևել դպրոցում սահմանված կարգ ու կանոնին
..Կարևորել մաքրությունը,անձնական հիգիենան,կարգապահությունը և ճշտապահությունը:

..Դրական վերաբերմունք ձևավորել ուսուցիչների,դասընկերների և շրջապատի նկատմամբ:
..Հաճախակի կազմակերպել բաց քննարկումներ տարբեր թեմաների շուրջ:
3.1ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ-կարևորել կրոնը յուրաքանչյուրի կյանքում՝նշելով համախմբող և հայապահպան նշանակությունը:
3.2ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ-կրթել և դաստիարակել աշակերտներին,նրանց մեջ գեղեցիկը գնահատելու և արժևորելու կարողությունները;
3.3ՌԱԶՄԱ-ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ-յուրաքանչյուր աշակերտի գիտակցության մեջ սերմանել՝ՍԵՐ և ՀԱՐԳԱՆՔ դեպի ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿ:
3.4 ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ-արժևորել սպորտը և գնահատել այն որպես մարդկության առողջության գրավական:
3.5 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ-բացատրել ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԵՐՆ ՈՒ ԿԱՐևՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՁԻ ՁևԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ:
3.6 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ-առավել հետևողականորեն սերմանել սեր աշակերտների կողմից բնության նկատմամբ:
4.Դպրոց-ընտանիք կապը-անցկացնել միջոցառումներ ծնողների և աշակերտների

մասնակցությամբ,ծնողներին ներգրավել բոլոր տեսակի դասարանական աշխատանքների մեջ:

## Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը

| ԴԱՍԻ ՀԱՄԱՐԸ | ԴԱՍԻ ԹԵՄԱՆ |
|---|---|
| 1 | Նախորդ ուստարվա արդյունքների վերլուծում,նոր ուստարվա անելիքների ծրագրում,առաջարկությունների արկղիկի պատրաստում: |
| 2 | Հայրենիք,ազգ,մայրենի լեզու թեմաների քննարկման անցկացում: |
| 3 | Անկախության  անգնահատելի դերն իմ յանքում: |
| 4 | Հավատ,գաղափարախոսություն,պատմություն և ժամանակ: |
| 5 | Հայաստանի հուշարձանները,ու՞ր կուզենայիք գնալ հաջորդ ուսումնական էքսկուրսիայի ժամանակ |
| 6 | Աշխարհընկալում,միմյանց հարգելու փոխըմբռնում |
| 7 | Նվիրվածության գաղափարախոսությունը |
| 8 | Ճակատագիր թե՞ սեփական բախտի տնօրինում |
| 9 | Կրթության դերը մեր կյանքում |
| 10 | Հոգու կրթություն և մտքի թռիչք |
| 11 | Ոսկե աշնան գույներն մեր կյանքում |
| 12 | Աշնանային էքսկուրսիա,դիտել անգլիական ֆիլմ պրոյեկտրով |
| 13 | Օտար լեզվով ֆիլմի քննարկում և վերլուծում |
| 14 | մարդկային  հարաբերությունների քնարկում |
| 15 | Առաջին կիսամյակի ուսումնական արդյունքների ամփոփում,ծնողական ժողովի անցկացում |

| | |
|---|---|
| 16 | Ամանորյա ջերմ մաղթանքներ և բացիմներ,դասարանի ձևավորում |
| 17 | Հայրենի՛ք ,ԵՍ  զարկն եմ քո բազկի… թեմայով քննարկում |
| 18 | Հայոց բանակ,նրա դերը մեր պետության համար |
| 19 | <<Պատասխանատու քաղաքացի >>թեմայով զրույց |
| 20 | Մասնագիտություններ,որոնք հետաքրքրում են ինձ |
| 21 | Ուսուցիչ,որին ես շնորհակալ եմ,որ նա…… |
| 22 | Մարդ,որին կուզենայի նմանվել |
| 23 | Ինչպե՞ս կյանքում հասնել հաջողությունների |
| 24 | Համակարգիչն ու ինտերնետը մեր կյանքում |
| 25 | Ինքնատիրապետման մի քանի հարցեր,ինչպես դրսևորվել տարբեր իրավիճակներում |
| 26 | Գարնան և սիրո պոեզիա |
| 27 | Իմ երկիրը երեկ,այսօր և վաղը |
| 28 | Առողջության պահպանումը և սպորտը մեր կյանքում |
| 29 | Զրույց<<Մեր ժամանակի հերոսները>> |
| 30 | Ուսուցչի դերը անձի ձևավորման գործում |
| 31 | <<Հայոց մեծ եղեռն>>աշակերտներին ներկայացնել թուրքերի կատարած ոճրագործությունը |
| 32 | Հաղթանակների ամիս `ՄԱՅԻՍ |
| 33 | Ի՞նչ սովորեցի այս մեկ ուսումնական տարվա ընթացքում |
| 34 | <<Վերջին դաս >>խորագրով ամփոփ դասի անցկացում |

Նախատեսում եմ նաև <<Բաց դասեր>>...,որի/որոնց թեմայի ընտրությունը կկատարեն աշակերտները`ընտրելով իրենց հոգեհարազատ թեման:

Դասարանի մասնակցությունը

ՀԱՄԱԴՊՐՈՑԱԿԱՆ,ՏԱՐԱԾՔԱՅԻՆ և ՄԱՐԶԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ

| Անցկացման օրը | Միջոցառման նպատակը | Անցկացման տեղը |
|---|---|---|
| 01.09 | Գիտելիքի օր | դասղեկ,դասարան |
| 21.09 | Անկախության օր | դասղեկ,դասարան |
| 05.10 | Ուսուցչի տոն | դպրոց |
| 24.12 | Ամանոր | դպրոց |
| 31.01 | Բանակի օր | դպրոց |
| 14.02 | Տյառնընդառաջ | դպրոց |
| 18.02 | Գիրք նվիրելու օր | դպրոց |
| 07.03 | Մարտի 8 | դպրոց |
| 07.04 | Ապրիլի 7 | դպրոց |
| 25.04 | Ապրիլի 24 | դպրոց |
| 10.05 | Հաղթանակի օր | դպրոց |
| 27.05 | Անկախության տոն | դպրոց |

Digitally signed by MARGARYAN RUZAN 5510590548